



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 40-Ն

ք.Ստեփանակերտ

**ՏԵՂԱՄԱՍՍՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՆԻՔԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 19/52 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 5-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1) տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը (այսուհետ՝ կնիք) հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացնում քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում.

2) տարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ, ընդունում կնիքը (այսուհետ՝ կնիք)՝ կատարելով դրա քանակական հաշվառում.

3) կազմավորված բոլոր ընտրական տեղամասերից կնիքներն ստանալուց հետո տարածքային ընտրական հանձնաժողովը դրանք փաթեթավորում է, փաթեթի վրա նշում առկա կնիքների քանակը և փաթեթը կնքում.

4) կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով են տեղափոխվում քվեարկության ավարտից հետո՝ ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթի հետ միաժամանակ, տարածքային ընտրական հանձնաժողովների միջոցով.

5) կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստուգվում են և հաշվառվում:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովների ստեղծման կնիքները հետ վերադարձնելու կարգը սահմանելու մասին» թիվ 19/52 որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

